ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 օգոստոսի 2026թ. թիվ 591-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 120-րդ հոդվածի 2-րդ, 2.1-րդ և 2.2-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ և 6-րդ մասերով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 27-ի «2026 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրեր սահմանելու մասին» N 67-Ա որոշումը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքում 2026 թվականի հոկտեմբերի 25-ին նշանակել և անցկացնել համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների (համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի) մեծամասնական ընտրակարգով հերթական ընտրություններ:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի նորընտիր տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց լիազորություններն ստանձնում են ոչ շուտ, քան նախորդ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ժամկետի ավարտման հաջորդ օրը:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-08-04 15:56:36 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. օգոստոսի 4
ք.Վանաձոր